№ 161 Սեպտեմբերի 13 (25) 1880 Սեպտեմբերի 13 (25) № 161

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր նպատակը:—Ներքին տեսութիւն: Նամակ Գանձակից: Նամակ Քանարազից: Նամակ Ալէքսանդրապոլից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Հայերի շարժումը Թիւրքիայում: «Берегъ» լրագրի թղթակցութիւնը: Արևելեան գործեր: Յունաստան: Նամակ Թիւրքիայից:— «Մշակի» պատասխաններ: Յայտարարութիւններ:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Հատ ուրախալի երևոյթ է որ այժմ «Մշակի» մէջ սկսում են աշխատակցել բացի լուսաւորչական հայերից՝ կաթոլիկ և բողոքական հայերը:

Մեր նպատակն է թոյլ տալ ամեն հային միջոց ունենալ իր մտքերը մեր լրագրի էջերի մէջ յայտնելու: Իսկ ի՞նչ կրօնին է պատկանում այդ հայը, մեզ փոյթ չէ:

Մենք ասացինք արդէն և դարձեալ կրկնում ենք, որ մեր նպատակն է դարձնել «Մշակից» մի ընդհանուր հայոց օրգան, մի ազգային հայոց թերթ, որի մէջ ամեն մի հայ համայնք, ամեն մի հայաբնակ քաղաք կամ գիւղ, մեր հասարակութեան ամեն մի դասակարգ, իւրաքանչիւր հայ անհատ կարողանար յայտնել իր մտքերը, վկայել իր կենսական ամենահրաժեշտ թէ բարոյական և թէ նիւթական պէտքերի մասին:

Իսկ ո՞վ է այն հայը, այսինքն ի՞նչ կրօնին, ի՞նչ եկեղեցական աղանդին է պատկանում նա,— լուսաւորչական, կաթոլիկ, մահմետական, թէ բողոքական,— այդ մեզ մի և նոյն է:

Հայոց լրագիրը միայն այն ժամանակ կարող է ազգային թերթ համարվել, երբ անխտիր, անկեղծ և անկողմնապահ կերպով ամեն հայի առջև բաց է անում իր էջերը, և ոչ թէ ընդունում է յօդուածներ միայն մի յայտնի աղանդին պատկանող հայերից:

Մինչև այժմ կաթոլիկ և բողոքական հայերը մուտք չունէին մեր ազգային ոչ մի հիմնարկութեան մէջ, նրանք աքսորված էին մեր ազգային կեանքի բոլոր գործակատարութիւններից: Հայ կաթոլիկը և հայ-բողոքականը չէին կարող ոչ տեսուչ, ոչ հոգաբարձու, ոչ ուսուցիչ, ոչ վերակացու լինել մեր դպրոցներում, ոչ լրագրապետ կամ այս ու այն հայոց ընկերութեան անդամ լինել, նրանց զաւակներն էլ չէին կարող աշակերտ ընդունվել մեր ազգային դպրոցների մէջ: Միակ հիմնարկութիւնը, որ անխտիր նայում էր բոլոր հայերի վրա, ինչ կրօնին և պատկանէին նրանք, դա Բագուի «Մարդասիրական» ընկերութիւնն էր: Գոնէ այս ոգով է խմբագրված այդ ընկերութեան պրոգրամը, որ իր գոյութեամբ պարտական է մի ճշմարիտ հաղորդիւ, լուսաւորված, ազգասէր հային, բժիշկ Պոստոմեանցին: Եւ եթէ այդ ընկերութեան հիմնողի լուսաւոր գաղափարները չէն իրագործվում,—այդ ի հարկէ, հիմնողի մեղը չէ....

Այս տեսակ դրութեան մէջ, երբ այլազգաւան հային ազգային կեանքի ոչ մի պաշտօն, ոչ մի գործունէութիւն մատչելի չէր, ամենամեծ անարդարութիւն կը լինէր որ և հայ լրագիրները իրանց էջերը փակէին այլազգաւան հայերի առջև և մամուլի միջոցով էլ նրանց հնար չը տային ոչ արդարանալ իրանց վրա բարձած զուր բամբասանքներից, ոչ էլ արտայայտել իրանց անհրաժեշտ կենսական պէտքերը....

Հայերը հաւատացնում են թէ հալածասէր ոգի չունեն, գտնվում են մարդիկ որոնք հաւատացնում են թէ «Մշակը» բամբասում է հայ-լուսաւորչականներին, երբնա յայտնում է թէ այս կամ այն գաւառական հայաբնակ քաղաքում հայ լուսաւորչական ամբոխը հալածում է կաթոլիկ և աւետարանական հայերին: Բայց նոյն մարդիկ, որոնք հաւատացնում են թէ մենք զրպարտում ենք հայերին, անասելի կերպով վշտացվում են, երբ տեսնում են թէ մենք մեր լրագրի էջերը բաց ենք անում այն հայերին, որոնք այլակրօն լինելով, ոչ մի տեղ հայոց շրջանի մէջ ապաստան չեն գտնում իրանց համար:

Այդ մարդիկ որոնք շատ անգամ յանդգնում են գրիչը ձեռք վերցնել, կը պահանջէին մեզանից, որ մենք էլ նրանց պէս հալածէինք այն բոլոր հայերին, որոնք տիրապետող կրօնին չեն պատկանում:

Եւ ինչ բանի մէջ են մեղադրում մեզ. երբ «Մշակը» տպում է մի հայ-կաթոլիկի յօդուածը,— մեզ մեղադրում են թէ մենք ամբողջ հայոց ազգը կամենում ենք կաթոլիկութեանը դարձնել. երբ մեր լրագրի էջերի մէջ երևում է մի աւետարանական հայի գրուածքը,—մեզ սկսում են մեղադրել, որ մենք հայերին բողոքական ենք կամենում դարձնել: Վաղը, եթէ մի հայ մահմետականի յօդուածը կերևայ «Մշակի» էջերի մէջ,— մեզ կը սկսեն մեղադրել, որ մենք ղուրան ենք քարոզում հայերի մէջ....Բայց հնարաւոր է, արդեօք, որ մարդը միաժամանակ, ամեն տեսակ և մին միւսից տարբեր կրօններ քարոզէր մի ազգի մէջ:

Ուրեմն պարզ է որ մեր նպատակը չէ այս կամ այն կրօնը քարոզել հայերի մէջ, երբ մենք միաժամանակ թոյլ ենք տալիս ամենածայրայեղ կրօնները դաւանող հայերին ապաստան գտնել մեր լրագրի էջերի մէջ, բայց մեր նպատակն է հաստատել ազգային միութեան գաղափարը, որ կրօնի հետ ոչինչ գործ չունի: Այդ գաղափարն է, որ դրդում է մեզ անխտիր կերպով հիւրընկալել մեր թերթի էջերի մէջ ամեն մի լուսաւորված հայի արտայայտութիւնը:

Եւ դարձեալ ուրախալին այն է, որ այժմ թէ կաթոլիկ և թէ բողոքական հայերը սկսում են մեր լրագրի մէջ խիստ քննողական յօդուածներ տպել, նոյն իսկ իրանց դաւանակիցների պակասութիւնների դէմ:

Կանցնեն մի քանի տարիներ,—և հայոց հասարակութիւնը կը համոզվի որքան արդիւնաւոր էր մեր յարուցած գաղափարը, որքան օգտակար էր ազգի համար մեր գծագրված նպատակը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 1-ին

1879 թվին Գանձակում «Արարատեան» ընկերութեան նպատակն սկսաւ ստորագրութեան ցուցակը և հաշիւը ինձ մօտ լինելով, ուղարկում եմ խմբագրութեանդ, խնդրելով նորա տպագրութիւնը:

Պ. Տէր-Ներսէսեանի հարանիքում հաւաքվեց 280 ր. *):

Պ. Նաբաթեանի տանը ստորագրվեցան, ամեն տարի նուիրելու խոստմամբ, մշանջենաւոր անդամներ:

Պ. պ. Մ. Թիմուրեան 10 ր., Յովհաննէս Խաչատրեան 10 ր., Դ. Ս. Յովհաննէսեան 5 ր., Աղայ Աղայեան 5 ր. **), Գրիգոր քահանայ Թումանեան 2 ր.: Իսկ պ. պ. Սարգիս Աֆանասեանը Պետրոս Նաբաթեանը, Ներսէս Տէր-Ներսէսեանը արդէն հարիւրական ր. նուիրած լինելով, ստորագրվեցան մշանջենաւոր անդամներ տասական ր. 1880 թուականից սկսելու իրանց նուիրատուութիւնը: Առանձին առանձին տներում շարունակելով ստորագրութիւնը մշանջենաւոր անդամների թուում աւելացան հետևեալ տիկիններ և պարոններ: Տ. տ. Վասիլանայ Մէլիքեան 2 ր., Մարիամ Ղուկասեան 2 ր., Մագթաղ Տէր-Ներսէսեան 2 ր., Մարիամ Տէր-Ներսէսեան 2 ր., Յովհաննէս Թիմուրեան 5 ր., Սարգիս Յովհաննէսեան Աֆայեան 5 ր., Մանչիր Մելիք-Ստեփանեան 5 ր.:

Միանդամից նուիրեցին՝ տիկնայք Աֆանասեան 10 ր., Դ. Ս. Յովհաննէսեան 5 ր., Աւետիք Մեսրոպեան Թառումեան 5 ր., Սարգիս Յովհաննէսեան Աֆայեան 5 ր., Մանուէլ Ամիրխանեան 5 ր., Մկրտիչ Տէր-Ներսէսեան 5 ր., Սիմոն տիրացու Յովհաննէսեան 3 ր., Աւետիք Տէր-Աւետիքեան բանանցեցի 1 ր., Նուիրատուութեան բոլոր գումարն է 319 ր.:

Որովհետև մտադրութիւն կար շարունակել ստորագրութիւնը, բոլոր Գանձակի բնակիչները հաղորդակցելով նրան, ես առձեռն ժողոված 278 ր. յանձնեցի պ. Ն. Տէր-Ներսէսեանին, որ խոստացաւ եկեղեցական գումարի հետ շահացնել: Բայց ստորագրութեան շարունակութիւնը յառաջ չը գնաց, նորա համար որ քաղաքը ենթարկվեց երկու ծանր պատիժների, այսինքն, մորեխի և Ամբրոսիոս վարդապետի արշաւանքներին:

Այս 319 ր. գումարից պ. Տէր-Ներսէսեանի ձեռամբ արդէն ուղարկված է «Մշակի» խմբագրութեան 278 ր.: Ճանապարհորդութիւնից վե-

*) Այս հաշուից մեծ պ. Ա. Մալեանը ուզի օգտակար համարեց իր 50 ր. նուէրը սովածների նպատին ուղարկել:

*) Պ. Աղայ Աղայեանը, որի ամուսինն ևս 2 ր. ստորագրվել էր, հեռքից իր ստորագրված անունը. 7 ր. մեծ գումար չէր և ոչ ոք ստիպում չէր նրան ստորագրվելու:

բաղառնալով, ապառիկներից ժողովեցի 27 ր., որը ներկայացնում եմ խմբագրութեանդ: Մնում է Մարիամ և Մագթաղ Տէր-Ներսէսեանների, Մանաջիր Մելիք-Ստեփանեանի և Մանուէլ Ամիրխանեանի վրա 14 ր., ապառիկ, որը լոյս ունեմ յիշեալ պարոնները և տիկինները ինքնայորդոր կը բարեհաճեն ուղարկել «Մշակի» խմբագրութեան:

Վերջացնելով ընկերութեան հաշիւը, պարտք եմ համարում յիշեցնել պ. Ն. Տէր-Ներսիսեանցին, որ 278 ր. շահը դեռ ևս մնում է նորա վրա անվճար:

Արսէն Թոխմախեան

ՆԱՄԱԿ ՔԱՆԱՐԱԳԱՁԻՑ

Օգոստոսի 25

Թէև իմ ինչին լման ձգել էի սովելոց գանձանակի մէջ, նորէն կարդացի ձեր յարգելի «Մշակ» լրագրի № 132-ի մէջ սովից յառաջացած թշուառութիւնների մասին, որը ցան ու ցիր է արել մեր անօգնական հայրենակիցներին ու թշուառ մանուկներին, և քշել է մինչ Կ. Պոլիս, և ինչպէս անդ ընդունել են ազգի բարերարներից և բարերարուհիներից խնամելու համար (փառք և պատիւ նրանց) և թէ ինչպէս մեր սրբազան պատրիարքն յորդորել է ժողովուրդին դէպի գթութիւն և օգնութիւն այն թշուառներին, և բարեհաճել է մեծ գումար պարտք առնել ազգի թշուառութիւնն թեթևացնելու համար անխիղճ սովի ճանկից. վասնորոյ ինձ պարտք համարեցի կրկնել իմ կարողութեան չափ օգնել մեր թշուառ եղբարց և քերց, ուղարկելով սրա հետ քսան և հինգ ր. (25 ր.) դրամ, կը խնդրեմ հասցնէք սովելոց մասնաժողովին այս իմ փոքրիկ նուէրը:

Քանի անգամ տեղիս հայ վաճառականներից խնդրվեցի, որ սրանք էլ օգնութեան մասնակցէին. իմ խնդիրն թողին անկատար, որովհետև իրենց նման հարուստ չէի, ուշք դարձնէին, և իրենք էլ առաջ չընկան, իրանց անձնական օգուտն ազգի օգտից վեր դասեցին, ու մեր թշուառ հայրենակիցներին թողին անօգնական ես կարծեցի ուրիշ տեղեր հասցրած կը լինէին. իրենց նուէրները, բայց տարաբաղդաբար և ոչ մի տեղ չը կարդացի ասուց նուիրատուների անունները, բացի երկու ընկերների, որոնց կաղղեմ իմ ջերմ շնորհակալութիւնը: Վերջացնելով նամակս, յարգոյ խմբագիր, խնդրեմ տեղն տաք ձեր պատուական լրագրի մէջ:

Աւետիք Փանեանց

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Սեպտեմբերի 3-ին

Հրաւիրված լինելով հայ-կաթոլիկ երիտասարդ Սիմոն Տէր-Մարտիրոսեանի հարսանիքին, մի փոքրիկ խումբ՝ լուսաւորչական և կաթոլիկ հայերս ուրախանում էինք միասին: Հայկերդների ժամանակ պատուելի Մանուկ քահանայ Տօնոյեանց դարձաւ դէպի հանդիսականները մօտաւորապէս հետևեալ խօսքով:

«Սիրելի եղբայրներ: Մենք որ այսօր հաւասաւորապէս ուրախանում ենք այստեղ, հայ-կաթոլիկներ և հայ-լուսաւորչականներ, առանց կրօնի խորութեան, որպէս մի ազգութեան դաւակներ, մեզ համար սուրբ պարտականութիւն է յիշել որ մենք ունենք հարազատ եղբայրներ թիւրքաց Հայաստանում, որոնք տանջվում են սովածութիւնից և այս րոպէիս շատերը նրանցից իրանց արիւնով ե կեանքով պաշտպանում են հայի պատիւը և իրանց կեանքը զոհում են: Մենք պարտական ենք նուէրներով մեր օգնութիւնը հասցնել թիւրքաց Հայաստանի մեր եղբայրներին: Եթէ պատում էք այս հարսանիքը, յիշեցէք և մի մոռանաք մեր եղբայրների ներկայ վիճակը:»

Պատուելիի խօսքին իսկոյն արձագանք տուեցին ներկայ գտնվածները և սեղանի կառավարիչ պ. Յակոբ Աստոյեան, իսկոյն սկսեց նուիրատուութիւն հաւաքել, որից գոյացաւ 33 ռուբլ գումարը: Ահա ուղարկելով խմբագրութեանդ այդ գումարը, խնդրեմ հասցնել նրան «Միայեալ ընկերութեան» ձեռքով «Սովելոց մասնաժողովին», կամ հասցնել նոյն ընկերութեանը գործադրել հայ ազգի ներկայ անհրաժեշտ պէտքերին:

Նուիրողներն են. Մանուկ քահանայ Տօնոյեան 1 ր., Մաշտեաի Սարգիս Խաչոյեան 10 ր., Գրիգոր Սպոռչիկեան 10 ր., Յակոբ Աստոյեան 2 ր., Մէլիք Սօղոմեան 2 ր., Սիմոն (հացագործ) 2 ր., Օհաննէս (չիւսն) 1 ր., Պողոս Յակոբեան 1 ր. Սուագ Յակոբեան 1 ր. 50 կ., Նազարէթ Գասպարեան 1 ր., Անոյշ 45 կ., Պետրոս Բէշլուբեան 1 ր. և փոստի ծախս: Ընդամենը 33 ռուբլ:

Պետրոս Բէշլուբեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սեպտեմբերի 12

Հայկական թատրոնի առաջին ներկայացման ուղեցի գնալ, դժբաղդաբար օր առաջ տոմսակ վերցառնելուս պատճառաւ տեղ չը կար, ճարը հատաւ, 3 ռուբլի վճարեցի և օրքէստրի մի տոմսակ առի. ես կարծեցի թէ օրքէստրի տոմսակը յատուկ տեղ ունի նստելու, բայց ափսոս, վերջը հասկացայ թէ նուագածուներուն կարգը նստելու արժէք ունի եղեր առած տոմսակս, առաջի բերան ամբէշայ նուագածուաց խմբին խառնվելու, մինչև վերջը ոտքի վրա կանգնելէ ալ վախենալով, ամենայն երկիւղածութեամբ գնացի թմբուկ ածողին տեղը նստայ: Հազիւ 2 վայրկեան նստած էի, թմբուկին տէրը հասաւ, խոշոր աչքերը բանալով տեղը պահանջեց, վեր կացայ, մէկ վիոլօնիստին տեղը պարապ էր, իսկոյն այնտեղ բաղմեցայ վիոլօնիստն ալ եկաւ, տեղէս ելայ, բասս պրոֆոն, տօյին ետեը կրծկրտեցայ, նա ալ եկաւ, վերջապէս կարգաւ ամեն մէկ նուագածուներուն աթոռներուն վրա երկերկու վայրկեան նստելով և վերկանգնելով ուզեցի chef dorchestre-ի տեղը յափշտակել, այս սրբապղծութեան ալ չը համարձակեցաւ, առջի երեք ռուբլիանոց տեղս վերադառնալու որոշումը տուի, այսինքն գնացի կրոնակը պատին տալով կանգնեցայ. պատին վրա այնքան կեր կար, որ ալիւրաթափ Ջաղացպանի բանուոր դարձայ: Վնաս չունի, ես հայ բեմը սիրում եմ, այն գիշեր ալիւրի մէջոքի մէջ ալ դիս մոցնէին և գլխի վար թատրոնին առաստաղն կախէին, դարձեալ պիտի համբերէի, մխիթարեալ կը լիներ եթէ նստարան չը գտնված ժամանակը օդի մէջ կանգնելու տեղ չը ծախէին, կամ գոնէ մէկ ու կէս ռուբլի առնէին փոխանակ երեք ռուբլիի, որովհետև կանգնած տեղիս հազիւ հազ բեմին կէսը կարողանում էի տեսնել:

Ես չափս կը ճանչնամ, թատրոնի դերասաններու խմբին համար բէցէնդիա կամ կրիտիկա գրելու անկարող եմ, այս նուրբ պաշտօնը աւելի յաջողակներուն թողնելով. մի քանի բան յիշեցնեմ:—Նախ և առաջ այն գիշերվան «Տէրէզա» պիէսային մէջ հարիւրաւոր անգամներ «վան զի» բառերը կրկնվում էին ինչպէս և յաջորդ պիէսաներուն մէջ, երկրորդ—ոդի Հայաստանի կենդանի պատկերին մէջ Մուշ, Վան, Սիս, և Դուինի աւերակները կային, և ամենից հռչակաւոր Անին մոռցվել էր, այս բանը անները լի է. աւերակաց լուսանկար պ. Քիւրճեանն ալ ամիսներով Անոյ աւերակները նկարեց, փոխանակ Վանայ Շամիրամի պարիսպները նկարելու. եթէ հայ թատրոնի հայրենասէր կոմիտէն Անին մոռանայ, ժողովրդին Անի ասես, պիտի պատասխանէ թէ այնպէս բան չը կայ: Երրորդ,—անտրակտի ժամանակ վերջին զանգակը խփվելէն և վարագոյրը բացվելէն յետո կօշիկներու ճչաղին կրճռոց և շըշնկոցներով և դռներու աղմկալից բախումներով շատերը թատրոն կը մտնեն խաղը խանդարելու: Շատ անախորժ է այս սովորութիւնը. եթէ հանդիսականաց ուշադրութիւնը դէպի իրենց գրաւելու համար կտնեն այս թեթևամիտները, այսպիսի նախատեսութեան տարի չկայ, որովհետև ոչքա այնքան տեսնված և ճանչցված մարդիկ են, որ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնէր: Այս սովորութիւնը կայ Եւրոպայի թատրոններու օթեակ ներուն մէջ. խաղը սկսվելից յետոյ կը դան որպէս զի բազմականը ուշ դարձնեն նոր եկողներուն, բայց և այնպէս անձայն կը դան առանց խանդարելու:—Թոյլ տուէք ինձ ասել թէ «Լիսի Դիդիյէ» ներկայացման գիշերը ճշմարիտը խոստովանելով յիմարանոցը զրկվելու չափ պ. Ադամեան լաւ խենթացաւ և օրիորդ Աստղիկը իր մահուան յուղարկաւորութեան հանդէսը կատարելու չափ լաւ մեռաւ:

Կրռօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պետերբուրգի հայ ուսանողներից մէկը խընդրում է մեզ յայտնել, թէ նա արդէն սկսել է թարգմանել ռուսերէն լեզուով Բաֆֆիի «Խենթ» անունով վիպասանութիւնը և դիտաւորութիւն ունի լոյս ընծայել տեղային պարբերական հրատարակութիւններից մէկի մէջ:

Մեզ հաղորդում են, թէ մի ընտանիք ԹԻՖԼԻՍԻՑ գնացած է եղել որպէս ուխտաւոր Թելէթ գիւղը, այնտեղից վերադառնալու ժամանակ, ճանապարհին աւազակները յարձակվում են նրանց վրա, կողոպտում են, մի քանիսին սպանում են. աղատվում է մի երիտասարդ միայն:

ԱՑԳԵՀԱՏ գիւղից գրում են. առանց այդ գիւղի բնակիչների համաձայնութեան Էջմիածնի սինոդի հրամանով մի նորընծայ քահանայ ուղարկվել է ժողովրդին տովուելու: Գիւղացիները չեն ընդունում նրան, բողոքում են, ասում են քահանային, որ հեռանայ իրանց գիւղից, բայց քահանան չէ ընդունում: Այժմ գիւղացիները վճռել են իրանց մէջ ամենեին եկեղեցի չը գնալ, և նրան ոչ մի եկեղեցական խորհուրդ կատարել չը տալ:

ՂԱԶԱՂԱՆ գիւղից գրում են. աւազակները մտնելով Ս. Պ.-ի տունը գողանում են բաւականաչափ պատրաստի փող և արծաթեղէններ: Աւազակները բռնվեցան. յայտնվեցաւ, որ բոլորն էլ ազգով հայ են: Գողացած փողերի մի մասը յետ են ստացել:

ՀԱՂՊԱՏԻՑ գրում են. մօտաւորապէս երկու տարի է, տեղային դպրոցը փակված է: Հայր Խ. վարդապետը այդ ուսումնարանի անունով փողեր հաւաքեց, ոչ միւս անգամ բաց անէ դպրոցը, բայց մինչև այսօր յայտնի չէ, թէ հայր սուրբը ինչ արեց իր հաւաքած փողերի հետ:

ՇՈՒՇՈՒՑ գրում են՝ գողութիւնները քաղաքի մէջ և աւազակութիւնները քաղաքի շրջակայքում դարձեալ շարունակվել սկսվեցան: Սեպտեմբերի 3-ին, անյայտ չարագործներից մի կողակ սպանվեցաւ ռուլվարի մօտ: Մութը պատելուց յետոյ փողոցներում միայնակ անցնելը անհարին է դարձել: Ամեն րոպէ կարելի է հանդիպել սրիկաների:

Ռուսաց «Берегъ» լրագրի № 163 բանասիրականի բաժնում տպված է մի յօդուած հայերի մասին «Новѣйшія свѣдѣнія о жителяхъ Турецкой Арменіи» (ամենանոր տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանի բնակիչների մասին) վերնագրով: Յօդուածը ստորագրված է Ենդիբար Յովհաննէսով:

Մեզ պատմում են որ սեպտեմբերի 5-ին Թիֆլիսի «Շաւի գիւղ» ասված Հալաբար թաղի մի մատում անձրևի հետ միասին մանր գորտեր ևս թափվեցան երկնքից. Այս բանը սոսկում պատճառելով բնակիչներին, Աստուծու պատուհաս և կամ նոր գալիք մի մեծ պատժի դուշակութիւն է կարծվում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԷՋ

Երզրումից օգոստոսի 24-ին գրում են Վիէննայի «Politische Correspondenz» լրագրին:

Ամենահամբերատար ժողովուրդը թիւրքաց կայսրութեան մէջ—անտարակոյս, հայոց ժողովուրդն է: Հայերը դարերի ընթացքում միշտ հարատևարված են եղել. նրանց ազգային և կրօնական զգացմունքը ենթարկված է եղել հաղարաւոր վիրաւորանքների, նրանք կրել են անընդհատ ճնաներ իրանց վաստակների վերաբերութեամբ և երբէք կեանքի ու կայքի ապահովութիւն չեն ունեցել, այսու ամենայնիւ, ոչ մի ժամանակ չեն դիմել ինքնապաշտպանութեան: Նրանք երբէք իրանց բողոքը չեն յայտնել զէնքով և ապստամբական ցոյցերով: Միակ միջոցները, որոնցով նրանք արտայայտում էին իրանց ցաւերը, էին՝ աղերսագրեր Բ. Դրան անունով, խնդիրներ Կ. Պոլսի պատրիարքի անունով, աղաչանքներ տեղային նահանգապետներին,—ահա բոլորը, ինչ որ անում էին հայերը, որոնց խնդիրները, կարելի է, հէնց իրանց խղճութեան պատճառով մնում էին առանց հետևանքի և ոչինչով չէին փոխում Հայաստանի թշուառ դրութիւնը: Բայց վերջապէս, հայերի համբերութիւնն էլ հատաւ, և նրանք չեն գտնում փրկութեան մի ուրիշ ելք, մի ուրիշ հնար, բացի նրանից, որ իրանց բողոքը յայտնեն զէնքով: Զէյթունի բարձրաւանդակների վրա բնակվող հայերը ապստամբվեցան—ահա օրվայ նշանաւոր նորութիւնը: Երևելի և ամենից յարգված Պապիկ իշխանը առաջնորդում է ապստամբներին, որոնք այժմ իրանց յարձակումներով սարսափի մէջ են ձգել Վերին—Հայաստանի կողմերը: Մի ուրիշ շարժման կենտրոնը գտնվում է Հին-Բայազէդի հարաւային կողմերում: Ապստամբված հայերի զօրաբաժինը ամենասաստիկ կերպով ուժ և զօրութիւն է ստանում: Սկզբում 1200 հոգուց բաղկացած մի խումբ, որ դուրս էր եկել Մուշի դաւառից, մինչև Հին-Բայազէդին մօտենալը, այնքան բազմացաւ, որ նրանց թիւը հասաւ 2,800 հոգու, որոնք որդէն սկսել են գործը: Վանից հաղորդում են, որ այս ապստամբները այրեցին եօթը քրդաբնակ գիւղ: Այդ շարժման տարածվելու օգտին պիտի նպաստէ և այն նշանաւոր իրողութիւնը, որ Զուլամերիկի կողմերում նոյնպէս ապստամբվեցան հայերը (գլխաւորապէս նեստորական աղանդի):*) Նրանք հանդիսաւոր կերպով ընդունեցին հռչակաւոր Մար-Շիմոնին (**) որպէս իրանց քաղաքական և զինուորական գլխաւոր, և երդուեցան անպայման կերպով հնազանդվել նրան մինչև մահ: Մար-Շիմոնը առաջ տարաւ իր բանակը դէպի Վանի կողմերը: Դուրս գալուց առաջ նա դիմեց դէպի աւանձին զունդերի հրամանատարները իր ոգելից ճառով, որի մէջ նրանց ուշադրութիւնը դարձնում էր այն կէտի վրա, թէ ո՛րպիսի «սրբազան նշանակութիւն» ունի սկսվող պատերազմը «ժողովրդի և կրօնի» համար: «Հայերը—ասաց նա—ոչնչացան: Նրանք արիւնաքամ եղան ճակատագրի ծանր հարուածների տակ: Այժմ աստուածային արդարադատութիւնը զարթեցնում է և մեր ազգը մի նոր կեանքով, որը մենք, այսու ամենայնիւ, պէտք է մեր արիւնով ստանանք: Ձեր կռիւը պէտք է լինի միայն զինուորված ուժերի և փաշաների հետ, որոնք կառավարութեան գլխաւորներ են: Բայց ձեզ համար պէտք է մնան որպէս սրբութիւն բոլոր մասնաւոր ցեղերի իրաւունքները, և մեր երկրի ամեն մի բնակչի պատիւը, ինչ կրօնի և ինչ ազգի պատկանէին նրանք: Ուրաքանչիւր անկարգութեան համար, որ կարող էր վնասել մեր գործին, ես կը պահանջեմ խիստ պատասխանատուութիւն: Նա, որ զինուորվում է Աստուծոյ և ազգի անունով, չը պիտի արատաւորէ իր զէնքը անշահ անզթութեամբ: Ի նկատի ունեցէք այդ բոլորը:» Այս շարժումների պատճառով Թիւրքը կառավարութիւնը գանվում է խիստ անհաստատ դրութեան մէջ: Վանի գլխաւոր նահանգապետ Սամի-փաշան ունի իր ձեռքի տակ զօրքերի շատ ամնշան մի թիւ, թէև ամենից առաջ վտանգը նրան է սպառնում: Նա ժողովեց, իրաւ է, բեգիֆ-

*) Այստեղ մի սխալ է անում պ. թղթակիցը, որովհետև Զուլամերիկի մէջ նեստորական հայեր չը կան, այլ կան այնտեղ լուսաւորչական հայեր, որոնք բնակվում են այդ լեռնային երկրի անմատչելի բարձրաւանդակների վրա, և այնտեղ գտնված Զօլօ կոչված ասորի ցեղի հետ վայելում են մի տեսակ անկախ դրութիւն: Իսկ Զօլօները իսկապէս նեստորական են:

**) Մար Շիմոնը նեստորականների պատրիարքն է, որը մի և նոյն ժամանակ ընդունված է որպէս երկրի իշխանը:

Ծան. խմբ.

ներին և ձեռք առեց բոլոր միջոցները, որպէս զի Հայաստանում ցրված գօրքերը կենտրօնացնէ Վանի չորս կողմում: Նա կանչեց իր դրօշի տակ և քրդերի մի քանի խումբեր: Բայց մինչև նա կը պատրաստվի կատարելու իր պատերազմական գործողութիւնները, կանցնեն շաբաթներ, և շատ կարելի է, մինչև այն ժամանակը ապստամբները մեծ հարուածներ կը տան նրան: Կ. Պօլսից շուտափոյթ օգնութիւն ստանալու համար յոյս չը կայ: Պատերազմական վեզիրը պարզապէս յայտնեց մայրաքաղաքից Հայաստան զօրք ուղարկելու անկարելութիւնը: Վիլայէթի գլխաւոր քաղաքում (Էրզրումի մէջ) դեռ ամէն ինչ խաղաղ է, բայց այստեղ վախենում են, որ հայ բնակիչների մէջ կը յուզվի յանկարծակի շարժում: Բարձր Դուռը երկար ժամանակ հայերի գլխին խաղ էր խաղում, իսկ այժմ այդ խարդախված կառավարութեան հին և նոր մեղքերը, ինչպէս երևում է, սարսափելի կերպով պատժված կը լինեն»...

«БЕРЕГЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Берегъ» լրագրին գրում են Էրզրումից հետևեալը:

«Այս տարվայ հունձը Հայաստանի մէջ անսպասելի կերպով լաւ էր: Հացի գինը բաւական էժանացաւ և պէտք է ենթադրել, որ ամենակարճ ժամանակամիջոցից յետոյ աւելի կէժանանայ: Նատ վաճառականներ, որոնք անցեալ տարվանից մեծ քանակութեամբ հաց էին պահել, յուսալով թանդ գնով ծախել, մեծ վնասներ կը կրեն և չափազանց նեղացած են, որ իրանց յոյսերը չը կատարվեցան:

Որովհետև մի քանի ամիս սրանից առաջ Եւրօպայի մէջ լուր տարածվեցաւ Հայաստանի մէջ եղած սովի մասին, հայոց պատրիարք Ներսէսը հարցրեց Էրզրումից, թէ այդ լուրերը մինչև ինչ աստիճան ճիշդ են: Նորերումս պատրիարքին պատասխանեցին, որ այստեղի վիլայետի մէջ աղքատութիւնը շատ մարվում էր, բայց սով չը կար: Բացի այդ պատրիարքին հաղորդեցին, որ հայերի սովամահ լինելու լուրը սխալ է: Սովից այստեղ իսկապէս ոչ մի մարդ չէ մեռել: Թէպէտ անգլիական հիւպատոսը և Թիւրքաց կարանտինի բժիշկը կամենում էին համոզել Եւրօպային, որ Հայաստանի մէջ սով է տիրում, այնուամենայնիւ չը կարողացան մատնացոյց լինել հայի սովամահ լինելու և ոչ մի փաստի վրա: Միայն Վանի նահանգի մէջ հինգ կամ վեց քիւրդ է մեռել իբր թէ սովից, բայց նրանց մահվան պատճառի մասին դրական տեղեկութիւններ չը կան:

Օրերումս դուրս գնաց Էրզրումից Բեկկերփաշա իր ուղեկիցների հետ: Նրանց հետ ուղևորվեցաւ և անգլիական հիւպատոս պ. Տրոտտը: Բեկկեր-փաշայի և նրա ուղեկիցների ներկայութիւնը Էրզրումի մէջ երկրի համար ոչինչ հետևանքներ չի ունենայ և դրանց ճանապարհորդութեան համար արած ծախսերը ապարդիւն կարելի է համարել: Բեկկեր-փաշա ինքը այս բանը շատ լաւ հասկանում է, բայց իր ստացած ահագին ռոճիկը ստիպել է նրան չը հոգալ իր ճանապարհորդութեան հետևանքների մասին»:

Մի և նոյն լրագրի մէջ նորերումս մի այլ թղթակցութիւն էր տպված, որ բոլորովին հակառակ մտքեր էր յայտնում Հայաստանի մէջ եղած սովի մասին:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Լօնդօնից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ անգլիական կառավարութիւնը դիտաւորութիւն չունի զիջումներ անել Բ. Դրանը չերնոգօրիական հարցի վերաբերութեամբ: Անգլիան պնդում է, որ Թիւրքաց կառավարութիւնը զիջէ Չերնոգօրինայի Դուլցինիօի նահանգը այն սահմաններով, որ ցոյց են տուել պետութիւնները:

«Լօնդօնի «Daily News» լրագրին գրում են Հռօմից, որ պետութիւնների ընդհանուր մի գրութիւն պատրաստելու համար առաջ եկած դժուարութիւնները գրեթէ բոլորովին հեռացրած են և պետութիւնների գրութիւնը շուտով կը յանձնվի Բ. Դրանը: Թիւրքաց կառավարութիւնը հեռագրով պատուիրեց իր ներկայացուցիչներին օտար պետութիւնների մօտ, որ նրանք միջնորդեն ծովային ցոյցը մի քանի ժամանակով յետաձգելու համար: Թիւրք դիպլոմատների միջնորդութիւնը ոչ մի տեղ լաւ ընդունելութիւն չը գտաւ: Այստեղ հաւատացնում են, որ ֆրանսիական նաւատորմը շուտով ուղևորվելու է Բազուզա, բայց նրա ստացած հրամանները զանազանվում են այն հրամաններից, որ տուել են միւս պետութիւնները իրանց նաւատորմներին: Շուտով Բ. Դրանը մի գրութիւն կը ներկայացնվի հայկական խնդրի վերաբերութեամբ:

«Times» լրագրի Հռօմի թղթակիցը գրում է, որ իտալական կառավարութիւնը, ցանկանալով Անգլիայի հետ համաձայն գործել, ուշադրութիւն չը դարձրեց Ֆրանսիայի առաջարկութեան վրա նաւատորմին տուած հրամանները սահմանափակելու մասին: Այսպիսով անգլիական և իտալական ծովապետները միատեսակ հրամաններ ունեն: Որպէս զի արգելքներ չը պատահին ծովային ցոյց, կամ մի այլ գործողութիւն անելու ժամանակ, ֆրանսիական ծովապետը հրաման է ստացել չառանձնանալ և միւսների հետ համաձայն գործել իր ստացած հրամանների համեմատ: Իտալական ծովապետի զեկուցումներից երևում է, որ իտալական և անգլիական օֆիցերների մէջ ամենամօտ բարեկամական յարաբերութիւններ կան:

«Times» լրագրի Փարիզ թղթակիցը գրում է հետևեալ մանրամասնութիւնները ծովային ցոյցի մասին: Պետութիւնները պայմանաւորվել են, որ միացեալ նաւատորմը, մինչև նոր հրամանների ստանալը, կը պահպանի բացառապէս ծովային ցոյցի բնաւորութիւն: Պետութիւնները, իրանց համաձայնութիւնը ցոյց տալու համար, ապստամբ թիւրքերի և ալբանցիների առաջ կը բարձրացնեն իրանց դրօշակները և դրանով ցոյց կը տան, որ ապստամբները Եւրօպայի հետ գործ ունեն և ոչ թէ չերնոգօրցիների հետ: Բացի այդ նաւատորմը ծովային ցոյց անելուց յետոյ կարող է մի այլ գործողութեան անցնել միայն այն ժամանակ, երբ պետութիւների մէջ դրա մասին մի նոր համաձայնութիւն կը կայանայ: Եթէ պետութիւնների համաձայնութիւնը խանգարվի, ոչ մի պետութիւն չէ կարող շարունակել ծովային ցոյցը, կամ մի այլ գործողութիւն անել ուրիշ կերպ, եթէ պատասխանատուութիւնը իր վրա չառնի:

Լօնդօնից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ Դուլցինիօի հարցը նոր դրութիւն է ստանում: Անգլիական հիւպատոսը Գրինի մէջ, որ մի և նոյն ժամանակ Անգլիայի ներկայացուցիչ է Սկուտարիի մէջ, յայտնեց իր կառավարութեանը, որ Չերնոգօրիայի իշխանը հրաժարվում է Գրուդա և Դինօշից, եթէ Թիւրքաց կառավարութիւնը պաշտօնապէս և խաղաղ ճանապարհով մնացածը կը յանձնի Չերնոգօրիային: Չերնոգօրիայի այս քայլը ի նկատի ունենալով, Անգլիան և Ռուսաստանը պատճառ չեն ունենայ պնդել, որ Բ. Դուռը յանձնի Չերնոգօրիային Դուլցինիօի նահանգը պետութիւնների պահանջած սահմաններով:

«Polit. Corresp.» լրագիրը տեղեկութիւն է ստացել Ս. Պետերբուրգից, որ սխալ է այն լուրը, իբր թէ ռուսաց նաւատորմի վրա զօրքեր կը լինեն ցամաքը իջնելու համար: Այդ լուրը աւելի էլ սխալ է, որովհետև ռուսաց ծովապետ Կրեմերին տուած են նոյն հրամանները, ինչ որ միւս նաւատորմների հրամանատարներին:

«Polit Corresp.» լրագրին գրում են Սկուտարիից, որ Դուլցինիօի մէջ խանութները փակված են: Բոլոր տղամարդիկը զինուորվել են: Ծերերին, կանանց և երեխաներին ուղարկում են Սկուտարի: Ալբանցիները գրաւեցին Պլանինա-Մաղուրա, իսկ Թիւրք ռեդիֆները հեռացան այնտեղից: Պատմում են, որ Թիւրքաց կէս բատալիոն զօրքեր միացել են ալբանցիների հետ: Դուլցինիօի մէջ գտնված Թիւրքաց զօրքերի հրամանատարը ոչինչ չէ անում: Թէպէտ Սկուտարիի մէջ Թիւրքաց զօրքեր շատ կան, բայց նրանց չեն ուղարկում Դուլցինիօ:

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Լօնդօնի մէջ հրատարակվող «Standard» լրագրին գրում են Աթէնքից, սեպտեմբերի 10-ից հետևեալը:

Կօրֆուի մէջ սպասում են «Գէորգ Թագաւոր», «Էլլադա» և «Օլգա» զինուորական նաւերին, որոնք հրաման են ստացել ալբանական ափերի մօտ մնալ: Ասում են, որ յունաց զինուորական մինիստրին 12 միլիոն ֆրանկի կրեդիտ է տուած Անգլիայի մէջ զինուորական երեք մեծ նաւեր գնելու համար: Այդ պատրաստութիւնները կատարվում են այն նպատակով, որ յունական կառավարութիւնը հարկաւոր դէպքում կարողանայ ոյժով գրաւել այն նահանգները, որոնք վիճակված են իրան Բերլինի կոնֆերենցիայի վճռի համեմատ:

Աթէնքից նոյն լրագրին հեռագրում են, որ սեպտեմբերի 11-ին կամ 12-ին Թիւրքաց կառավարութիւնը կը ներկայացնի իր պատասխանը մեծ պետութիւների վերջին դրութեանը յոյն—թիւրքական սահմանագծի վերաբերութեամբ: Այդ պատասխանը ոչնչով չէ զանազանվում Բ. Դրան վերջին պատասխանից նոյն հարցի վերաբերութեամբ: Թիւրքաց կառավարութիւնը այժմ էլ յայտնում է, որ իր համար անկարելի է ընդունել Եւրօպայի առաջարկութիւնները և արդարութեան անունով խնդրում է պետութիւններից, որ նրանք համաձայնեն նորից բանակցութիւններ սկսել, թէ Թիւրքիայի և թէ Յունաստանի շահերին աւելի համապատասխանող նոր սահմանագիծ որոշելու համար:

Յունաստանի մէջ ամէն տեղ բնակիչները կամաւորներ են գրվում: Երկրի մէջ մեծ ոգևորութիւն է տիրում: Ամենքը պատրաստ են զէնքը ձեռքին մեռնել, պաշտպանելով իրանց հայրենիքի շահերը: Թէսալիայի և Էպիրոսի քրիստոնեայ բնակիչները երկիւղի մէջ են: Թիւրքերը և ալբանցիները ամենայն օր սպառնում են քրիստոնեաներին կոտորել: Անդադար լուրեր են ստացվում մահմետականներից կատարած բռնութիւնների մասին: Այդ նահանգների մէջ բնակիչները իրանց ապահով չեն համարում մահմետականների մոլեռանդութենից:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Վաղարշակերտ, 25 օգոստոսի

Մինչ ցարդ Ալաշկերտում առհասարակ հացի խնդիրը ամէն մարդի խօսակցութեան նիւթն էր, մինչ ցարդ գողերի, ասպատակների հարստահարութեան վերաբերեալ բողոքներ, թագրիրներ գրելով կը պարապէին մերազնեայք Յերօպային լսելի անել իրանց ձայնը՝ բայց ընդհակառակն Ալաշկերտցին կը մոռնայ այդ ամենը, երբ կը տեսնէ նա, տէրութեան հարկահանը մտրակն ի ձեռին ընդառաջ կանգնած կամ հրամանագրերն ընթեռնլիս: «Տէր Աստուած, ինչպէս խօսք հակցնենք սըրանց, մենք մեր անօթութեան հոգը քաշենք, քրդերի հարստահարութենից ազատուել կարենանք, թէ կառավարութեան 4 տարուայ ապառիկ մնացած հարկերն ոչինչ տեղէ վճարենք», այս բոպէիս կը բացականչէ ալաշկերտցին յուսակտուր ձայնով:

Այո, սովը հեռանալ կը թուի, բայց ոչ բաղմաց դռներէ. երէկ Քիւրդ-Ալի քիւրդ գիւղում, որը կը գտնվի Ալաշկերտի արևմտեան Տրապիզոնի կարաւանի մեծ ճանապարհի վրա, որտեղ մի քիւրդ Հասօ անունով, իր և իր որդւոց նօթութեան ու ստիպմանց չը կրնալով հանդուրժել, մի և նոյն ժամանակ իր որդիներէն մէկը, որ աւելի բարձր ի ձայն «հայրիկ հա՛ց, հա՛ց» կը պոռար, ճվար, նա՝ հայրն անգթաբար իւր սրտի կսկիծէն կելլէ կամացուկ մը որդւոյ ձեռքէն կը բռնէ, կը քաշէ գերեզմանոցին մօտ ու ողջ ողջ կը թաղէ զայն և յետ ընդկրունկ կը վերադառնայ ի տուն: Բոպէներ վրա անցնելով սոյն սարսափելի անցքը, իւր դրացիքն իմանալով կը վազեն, կերթան և տղի բըլրակի տակէն կիսակենդան դուրս կը բերեն 12 տարեկան մանուկը: Այսու ամենայնիւ ալաշկերտցին քաղց ու հարստահարութեանց տակտնութեամբ տանել գիտէ իւր հայրենիքում, բայց այսօր կառավարութեան ծանր հարկ մը վճարելուն մի երբէք: Զի Օս. կառավարութիւնը պատեհ միջոց գտնելով, զհայերը յետս կասեցուցել իրենց շարժողութենէն ձեռնամուխ եղած է սորանց $^1/_3$—$^1/_4$-ին ցորեն՝ գարի, կորեկի նոր բերքն ու արդիւնքը և ազգային ի նպաստ սովելոց տրված նուէրները թշուառներուն ձեռքէն կորզել, յափշտակել, որով լքեալ ժողովուրդ մը ցրուելու և ի չիք դարձնելու ամենադիւրին ճանապարհն այս է:

Այս մասին տեղումս քանիցս անգամ ժողովքներ եղան ընդ նախագահութեամբ մեծ. Մկրտիչ էֆէնդիի, բայց ապարդիւն եղաւ իւր ջանքը. քանզի Յովհաննէս վ.-ը., որ ատենէ մը ի վեր տեղս կը գտնուի իրան խնդրուեցաւ, որ ինքն մի քանի տեղական անձինքներով գնայ ի Կարին յայսմ հարկաւոր խնդիրքն ու բողոքը մատուցանէ, ում անկ է, թերևս յաջողվի նմա ցվերջ սովոյն յետաձգել տալ այժմ հաւաքելի հարկաց: Երևի նորին գերապատութեան փոյթը չէ իւր հօտի այս օրհասական տագնապը, թէև միշտ կը խօսի նա, թագրիրներ կը գրէ, շատերուն աչքը թոզ կը փչէ, առանց արդիւնք մը ի դուրս տալոյ, բացի վնասուց, որ երևեցաւ 1877 պատերազմական տարին: Խմբագիր տէր, այս խնդիրքը յանձնառու չը լինելով հանդերձ, չոգաւ նա ի Ղարա-Քիլիսէ և անտի ի Վանս ս. Յովհաննու, Պայազիտէն բռնած մինչ ի Ղարա-Քիլիսայի մերձակաները Պարսկաստանի և Տաճկաստանի ջալալցի քիւրդ ասպատակները աւարի առնելուց, ջարդ ու փչուր անելուց զկնի:

Այժմ ես յիշեալ վ.-ը. 5—6 տուն զօրպայ քըրդերի կամաւ բերել, բնակեցուցեր է վանքը նոցա օրական պարէն տալով որոնցով վանքում սպանուող բաշտցի էլ-Աղասիների (ցեղապետներ) ցեղին պատկանող վրէժխնդիր լինող քրդերէն ազատ մնան: Բայց և այսպէս մինչև այսպիսի առաջարկ մը եղած էր հայր սուրբին, գէթ ինքն հանգիստ կը մնար Վաղարշակերտում, սովելոց շտեմարանէն մասն և բաժին ընդունելով իրա և իր 4 փոքրաւորների և նոցա տնեցւոց համար, զոր հակառակ դէպքում կարող էր նա՝ հայր սուրբը հանդերձ իւր հարուստ փոքրաւորներով օգնել բարոյապէս և նիւթապէս սովելոց, որոց քսակները լի են դարձեալ ազգի կոպէկներով և որոնց համար հայր սուրբը կը ղանայ իւր ջանքը այսպիսի ճգնաժամի մը մէջ:

Պօղոս Ե. Մուրադեան

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Ղ. Տէր-Ղազարեան: Ձեր պահանջը փողը յետ ուղարկել, ոչ մի ռուսաց կամ օտարազգի լրագիր չի կատարվի: Մեզ ի՞նչ որ դուք փոշմանվեցիք, մեզ ի՞նչ որ յետադէմ ու մոլեռանդ գլուխ ունէք: Գեան էք, խօ, սկզբից լրագիրներից որը մոլեռանդ է, որը առաջադիմութիւն սիրող է. կարող էիք սկզբից մտածել, գրվել ձեր սիրած մոլեռանդ և ազգութիւնը սպանող լրագրին և չը գրվել այն լրագրին, որի առաջադէմ մտքերից ձեր ուղեղը վախենում է, ինչպէս դժոխքից: Միւս տարուց կարող էք գրվել մի մոլեռանդ, խաւարասէր և բթացնող լրագրին: Ինքներդ դորանից անկասկած չէք խելօքանայ, բայց «Մշակի» համար մեծ կորուստ չի լինի, եթէ վաղարշապատցի Ղ. Տէր-Ղազարեանց այլ ևս նրա բաժանորդ չի լինի: Հաւատացնում ենք ձեզ որ չենք էլ մտածի անգամ՝ դուք կաք, թէ չը կաք աշխարհիս երեսին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ գերդաստան, որը բնակվում է Մայիսսում, հրաւիրում է հայ օրիորդ—իմացող Հայերէն, Ռուսերէն և Գաղղիերէն եղուններ, նոյնպէս և երաժշտութիւն, անական ուսուցչուհի հոյ տեղը ընդունելու, 600 ռուբլ տարեկան ռոճիկով: Ճանապարհի ծախսը առնում է գերդաստանը իւր վրա: Ցանկացողները՝ իրանց պայմաններով՝ կարող են դիմել նամակով՝ Въ Майкопъ, Куб. обл. Николаю Іосифовичу Алиханову.

7—10

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՉԵՄԵՍՕՎ, բնակվում է ՍՕԼՕԼԱԿ, Վաղնեռեռեկայա փողոցի վրա, տուն №33

2—3

ՀԱՅԵՐԷՆԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻԱՆ, ՖՐԱՆՍԷՐԷՆԻ ԵՒ ԻՏԱԼԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ: ԵԶԻԿԵԱՆՑ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը:

2—5 (2)

ՖՐԱՆՍԻՈՒԼԻ քոյրեր ընդունում են ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ ժամ 9—1 ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուների և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ դասեր տալու համար: Սօլօլակի, տուն ՕՐԻԵԼՈՒ № 14:

3—3 (5)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ թէց ուղղակի թէյագործներից, նոյնպէս ՅՆՏՐԱԳ ՄԱԳՆԵԶԻԱ ծարաւութեան դէմ և կարբոլեան փօշի և ՀՆԳՈՒԿ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:

10—10.

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՈԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ջրեր:

40—40

Թեմական վերատեսուչ Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կուկի, Սիմէոնովսկայա փողոց, տուն Սարգիս Ալէքսանդրեանի №-16:

4—4.

Մի Ագուլեցի երիտասարդ, որ վաճառականութեան մէջ եղել է, ցանկանում է տեղ ունենալ մագազինում. որից ապահովելու համար ունի երաշխաւոր անձինք, պայմանների համար դիմել «Մշակի» խմբագրատանը:

5—8

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ գործարանը պահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվելիս ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետևեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԴ: Շիշը ամենով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամէն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չէն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յեկատերինայա հիւրանոցի տակ, Լիխատինսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը:

6—8 (2 շաբ.)

ՌԻՀԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վէներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտեյմբօրսկի վէներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմբօրսկի և Աստվածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առաւաւոտեան 9 ժամից մինչև 1 ժամը բժշկանոցի տոմակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ վերջացնելու պատճառով զանազան տեսակ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ծախվում են էապէս էժան գներով. Պ. ՄԻՐՋՕԵՎԻ նախկին պատկերահանդէսի մէջ, Գօլովինսկի փողոց, տուն Շլեսվի, Վեսելի լուսանկարի կարգին: ՎԱՃԱՌՈՒՄԸ սկսվելու սեպտեմբերի 4-ին և կը շարունակվի մինչև ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ը: Հոկտեմբերից պատկերահանդէսի ՍԵՆԵԱԿՆԵՐԻ մի մասը ՎԱՐՁՈՎ է տրվում: Միևնոյն տեղը բակում ԵՐԿԱԹԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ են ծախվում:

1—3

ԽԻՆՆԱՅԻ ԳԻՆԻ ջերմի դէմ, ԱՏԿԻՆՍՕՆԻ և ուրիշների ՀՈՏԱԻԷՏ ՋՐԵՐ, կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ, Արծրունու զալէրէյի վրա:

1—3

Կտաւի ԿԱՆԱՆՑ ՕՁԻՔՆԵՐ և ԹԻՒՆՈՑՆԵՐ, նոյնպէս ՏՂԱՄԱՐԴԿԵՐԱՆՑ և երեխաների: Մեծ քանակութեամբ ՊՕՐՏՄՕՆԻՆԵՐ փոքր և մեծ փողերի համար: ՊՕՐՏՍԻԳԱՐ, ՊՕՐՏՎԻԶԻՏ և ԹՂԹԱԿԱԼ: Գեղեցիկ ԱԼԲՕՄՆԵՐ, զանազան ՆԵՍԵՍԵՐՆԵՐ: Գլխերիկի ՍԱՊՕՆ: Սպասում եմ օրերում մեծ քանակութեամբ աղամարգիներանց ԳԼԽԱՐԿՆԵՐ կաստրիչ: ՍՏԵՓԱՆ ՄԱՆՎԵԼՕՎԻ խանութ Գօլովինսկի պրոսպեկտ, ՄԴԻՎԱՆՈՒՏՈՒՆ:

2—3

ՌՈՒՍԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները գիտեցող մի ՎԱՐԺՈՒՀԻ ԴԱՍԵՐ է փնտռում: Հասցէն. Սալդատսկի բազար, ՊՕԼԻՑԵՅՍԿԱՅԱ փողոց, տուն Կուզնեցովի № 30, բնակարան ՐԱՇԿԵՎԻՉԻ

3—5 (2)

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՕՆՖԵԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՕՆՖԵԿՏԻ, և ամեն տեսակ կոնդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբարցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ փոստային կոնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

7—50

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան արքեպիսկոպոս, Միքայէլ Միհանարեանց, Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետերբուրգայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց 'ի Կարին, Սովետ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կաղմ Հայերէն աւետարանին, Նուիրեալ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ:

Տփխիսում ստանալ կարելի է պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի գիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ և յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից առել առնողին 10% զեղչումն կը դրուի.

գնելու համար դիմել—Սէնքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տփխիս—Կենտրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Սեքոն Փանեանցին:

9—10



Կ. ՊԱՆՅԵՐ ԱՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐԵԼՕՎԻ: Եկող ձմեռվայ սեզօնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՉԵՒՐԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրօպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՉԵՒԵՐԻ չափազանց ԷԺԱՆ գներով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—.5 ռուբլ: Ոտքի 50—80 ռուբլ:



4

—25

Дозволено цензурою Тифлисъ, 12 Сентября 1880 г. Տպարան եղբայր Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ